

հեռագրով եւ Թէ. Մեղու Հայաստանի. լրագրի միջոցաւ լուր հասնելով քաղաքս, տեղւոյս արժանապատիւ առաջնորդական Փոխանորդը այս նոր տարեմտին առաւօտեան ըստ պատշաճի աւուրն, համառօտ տտենախօսութեան մէջ սոյն բերկրաւէտ լուրն եւս աւետեց մեր ժողովրդեանը. որոնց մեծ ուրախութեան զղայմունք եւ հոգեկան բերկրանք պատճառեց. վասն զի այդ մեծագումար առատածեռնութիւնը մէկ յատուկ նախախնամական ողորմութիւն եւ անակնկալ յաջողութեամբ էր իւրեանց մատաղահաս օրիորդաց բարեկիրթ դաստիարակութեան եւ օրինաւոր մայրեր պատրաստելու վերաբերութեամբ, որին խիստ շատ զգալի կարօտութիւն ունի մեր բաղդադուրկ մայր Հայաստանը:

Պատարագից յետոյ համախումբ հոգեւորական դասով կատարուեցաւ հոգեհանդիստ. որեւ, ինչպէս լսում ենք, կարգադրուած է իւրարանչիւր տարի եւս մէկ օր կատարել պատարագաւ. վասնորոյ եւ ես տեղւոյս հայազգի հասարակութեան այս մասով ունեցած բերկրաւէտ ուրախութեան եւ երախտամեծար զղացմանց ի լուր համօրէն ազգայնոց Թարգման լիւնելուս ուրախութեամբ լցուած, մեծայոյս եմ, Թէ Արարան եւս իւր հարազատ որդւոյ այս առաքինագործութեանց վերայ ուրախանալով պիտի բարեհաճի տեղւոյս ազգայնոց հետ բարեմաղթել որպէս նոյն Կտակարար Իշխանազն հանգուցելոյ առաքինի հոգւոյ Ատուածուստ վարձատրութիւն, նոյնպէս եւ նորա վսեմափայլ ազգատոհմի սոյնպիսի բարեգործութեամբ եւ յամայր ամօք յարատեւութեան համար ի պաշտօնութիւն Սուրբ Եկեղեցւոյ եւ ի պիտանաւորութիւն Ազգի:

Սպասելով յիշատակեալ ուսումնարանի բացման աւետելու ամենացանկալի ժամուն, մնամ մշտապէս եւ եռանդալին ցանկացող սոյնպիսի հոգեուրախ եւ ազգօգուտ լոյս:

Մկրտիչ Վարժ. Արարաջեանց.

ՆԱՄԱԿ ԱՍՏԲԱՆԱՆԻՑ.

. . . . Խմբագրութեան «Արարատ» ամսագրոյ.

ա. Աստրախանայ հայազգի վաճառական պարոն Կարապետ Զարարեան Գալստեանց ըստ հրաւիրանոց Հոգաբարձութեանս յՏ ներկայ ամսոյ համարաւ 4, ներկայացաւ ի սոյն, եւ ի վճար ստորագրեալ յամին 1867, մի հազար ռուբլի գումարի ի ժապաւինեալ տումարի ի նպաստ շինութեան նորոյ տան Գարոյի սրբոյ Կատարինեայ եկեղեցւոյ քաղաքիս

ինքնայօժար կամօք մատոյց զմի Թաղաւորական բանկի հինգ տոկոսաբեր քիլէթ 1860 ամի համարաւ 105,229, գումարաւ մի հազար ռուբլի ամաթի երկամեայ տոկոսեօք (այսինքն չորերին կուպոնօք) յայտնելով զցանկութիւն իւր Թէ զմայր գումար առաջարկեալ քիլէթի նուիրէ ի մշանջինաւոր սեպհականութիւն Գարոյաց. իսկ գտոկոսին ի վերայ ահար գումարի յամի ամի գործադրել ի պէտս պահպանութեանս այնոցիկ:

բ. Աստրախանայ հայ աստիճանաւոր Գրիգոր Զարարեան Բուդաղեանց նուիրեաց զ45 հասար «Վիհիլմ-Յել» բանաստեղծական մատեանս Յիօրեանի Թարգմանեալ ի Գաղիացւոց լեզուէ ի հայ. ի 1865 ամի ի Մոսկով ի Մովսիսէ Բուդաղեանց, գումարաւ երեսուն եւ մի ռուբլի յիսուն կոպէկ արծաթի:

գ. Բաքուայ հայ Անարօն - քէկ Դասարեանց նուիրեաց յօգուտ Գարոյաց զեօթն ռուբլի արծաթի:

դ. Աստրախանայ հայ Յակովբ Հայրապետեան պարոն Կրանիլչիկեանց առաջի արար ի նուէր Գարոյաց զ58 հատ հեղբէն սաղմոս, զ78 հատ այբբենարան, զ7 հատ նոր կտակարան եւ զմի հատ յատուկ Բառգիրք հայկական լեզուի տպեալ ի Վենետիկ, գումարաւ քառասուն ռուբլի իննսուն կոպէկ արծաթ:

Աւստի Հոգաբարձութիւնն զկնի յայտնելոյ զգոհունակութիւն իւր վերոյիշեալ անձանց վասն այսօրինակ նուիրագործութեանց, մանաւանդ առաջնոյն նշանաւոր գումարօք, շնորհ ունի խոնարհաբար խնդրել ի Խմբագրութենէ «Արարատ» ամսագրի, հրատարակել զըրամաւոր նուիրագործութենէ պարոն Կարապետի Գալստեանց եւ Անարօն - քէկի Դասարեանց, եւ զընծայաբերութենէ պարոն Բուդաղեանց եւ Կրանիլչիկեանց զրենօք յօգուտ Գարոյաց Աստրախանայ, ի զիտութիւն բարենախանձ անդամոց ազգի Հայոց:

Հոգաբարձուք

Աւագ Քահանայ Յովսէփ Բունիաթեանց  
Գրիգոր Սողոմոնեանց  
Յովհաննէս Սարգսեանց  
Սիմէօն Պօպօվեանց  
Խաչատուր Գաղաշեանց  
Սարգիս Բուրջալեանց

ի 24 Մարտի 1869 ամի

ԻՎ. Լաստախան:

ՆԱՄԱԿ ՀԻՆ—ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ

. . . . Խմբագրութեան «Արարատ» ամսագրի.

Հրամանաւ Նորին Վեհափառութեան, Տեառն եւ Տեառն ԳԵՌԳԱՅ Սրբազնագոյն Կաթողիկոսի Ամե-



նայն Հայոց, եւ Սինոզի սրբոյ Էջմիածնի տնօրէնութեամբը Հին - Նախիջեւանու հասարակութիւնը, օրերումս ստացան իրաւունք բանալոյ Հոգեւոր դպրոց Սուրբ Երրորդութեան եկեղեցւոյ սրահումը, ուր կային պատրաստուած վիճակային արդեամբ քանի մի յարմարութիւնք սենեակներ. եւ որոյ հոգատարութեան համար հաստատուեցան ի սրահոն հոգաբարձութեան, նոյն քաղաքացի պարոնայր մահտեսի Մկրտիչ Թունեանց, Կարապետ Գասպարեանց եւ Ստեփան Սիմարեանց: Այլ եւ յիշեալ հասարակութիւնը եւս արժանացան Նորին Վեհափառութեան մի քաղցր խնամակալութիւնը վայելել, ընդունելով յօգուտ դպրոցին յիշեալ եկեղեցւոյ ունեցեալ 4000 ռուբլի դրամագլխոյ մի միայն տոկոսիբը:

Քարտուղար Հոգեւոր Կառավարութեան  
Հայոց Հին - Նախիջեւանու

Գէորգ Յարութիւնեանց

ի 25 մարտի 1869 ամի

ի Նախիջեւան:

..... ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՐԱՐԱՏ ԱՄՍԱԳՐՈՅ.

Եւրբ Վեհափառ Կաթողիկոսը՝ նախնի սովորութիւնը վերանորոգելով՝ բարեհաճեցաւ Էջմիածնայ միաբաններէն մի քանիսն մեծ պահոց մէջ շրջակայ զիւղորայքը ուղարկել քարոզութեան, ինձ վիճակեցաւ Երեւանայ Օճակիպասարու եւ Գառնիպասարու դաւառների ժողովուրդը:

Եյս դաւառները, որոնք մինչեւ այս օրս թէ բարոյապէս եւ թէ մտաւորապէս շատ յետ էին մնացած, այժմ շնորհիւ Գերապատիւ Մեսրոպ վարդապետի Ամբաստանց, որ տեղեցոյս առաջնորդն է, սկսել են հոգ տանել իրանց բարոյական եւ մտաւոր զարգացմանը: Գերապատիւ Մեսրոպ վարդապետն ամենայն սիրով եւ հնազանդութեամբ Վեհափառ Կաթողիկոսի հանրաշահ եւ ազգօգուտ տնօրէնութեանց եւ պատուիրանաց կատարմանը հետեւում է. ազգասիրական ոգեով վառուած՝ կատարում է նա իւր պաշտօնը եւ պարտաւորութիւնը. լրացնում է ժողո-

վրդան արդի ամենակարեւոր պիտոյքը. հաստատում է շատ զիւղերում դպրոցներ եւ նրանք բարեկարգում է յարտեւ արդիւնաւոր զարգանալու համար, որով եւ Նորին Վեհափառութեան քաղցր ակնարկութեանց եւ շնորհաց արժանի է գտնւում:

Թէեւ շատ զիտողութիւններ արած եմ այդ դաւառների մասին, սակայն նրանք թողում եմ յետոյ, միայն այսքանս առ այժմ խնդրում եմ Ձեր . . . խմբագրութեան՝ Երաբատի էջերի մէջ զետեղել ի միտքս թողութիւն սրաից բարեկաշտ ժողովուրդոյ վերջինչալ դաւառների, եւ ի խրախուսութիւն Նորին Գերապատուութեան, որից շատերն կ'յուսամ այլպիսի բարի օրինակներ առնելու են, եւ հետեւելու միշտ իրենց ազգին ջերմեռանդութեամբ ծառայել, ինչպէս որ իրենց կոչումն պահանջում է:

Գրիգոր վարդապետ Տէր Ստեփաննոսեան

ի 12 ապրիլի 1869 ամի

ի զիւղն Վափն

(երբեմն մայրաքաղաք Հայոց):

Եյս անգամ այլ եւս տեղ չ'ունենալով, Կարսէն եկած եւ ուրիշ մի քանի նամականիք յետաձգել պարտաւորեցանք:

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ԽՈՐՀՐԳԱԾՈՒԹԻՒՆ

ԳԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՅ

Երկու հանգամանք մարդոց շօշափելի սխալանքի մէջ են ձգում. մէկ, երբ պատճառներ են վերադրում այնպիսի հանգամանքների, որոնք պատահած չեն. երկրորդ, երբ մի գործի օգտուէտ նպատակը չը սրոշած, նորա գործադրութեան կերպերի վերայ են խօսում:

\* \* \*

ՆՊԱՏԱԿ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ

Ուսուցանել, կրնանակէ սորվեցնել մի բան, իսկ կրնել, կրնանակէ վարժել մի բանի մէջ կամ